Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Դարակերտի Դ.Լադոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի ռուսաց լեզվի /6 դասաժամ/, ֆիզկուլտուրայի /8 դասաժամ/, տեխնոլոգիայի (տղաներ) /3 դասաժամ/ , տեխնոլոգիայի (աղջիկներ) /3 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիմում),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

*Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 2-ից մինչև 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը**, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:*

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 22-ին ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Դարակերտի Դավիթ Լադոյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (041) 56-90-56 կամ (093) 56-90-56 հեռախոսահամարներով: